Արձանագրություն N 3
ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-22/1 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
Մանկապարտեզի կարիքների համար սննդի գնման

ք. Երևան 14 հունվար 2022թ
ժամը 11:00

Մասնակցում էին՝
նախագահ՝ Կարապետ Թոռչյան
անդամներ՝ Աննա Սարգսյան
Աննա Գասպարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ.Մեհրաբյան

1. ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման և աճուրդի արդյունքների ամփոփման մասին

(Կ.Թոռչյան)

Ներկայացված փաստաթղթերի և նմուշների ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովն արձանագրեց.

- «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ապրանքային նշան, ֆիրմային անվանում և արտադրող դաշտերում լրացված է ապրանքի անվանումն, ինչպես նաև տեխնիկական բնութագիր դաշտում 2-րդ, 3-րդ, 10-րդ, 12-րդ, 16-րդ, 30-րդ, 38-րդ, 45-րդ և 64-րդ չափաբաժինների համար առկա է «կամ համարժեք» արտահայտությունը:
- «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ապրանքային նշան, ֆիրմային անվանում և արտադրող դաշտերում լրացված է ապրանքի անվանումը:
- «Սավա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ապրանքային նշան և ֆիրմային անվանում դաշտերում լրացված է ապրանքի անվանումը, ինչպես նաև տեխնիկական բնութագիր դաշտում 7-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 53-րդ չափաբաժինների համար առկա է «կամ համարժեք» արտահայտությունը:
- «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ի կողմից 4-րդ չափաբաժնի համար առաջարկվող «Անի Պրոդուկտ» արտադրանքը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:
- «ՂԱՀՐԱՄԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ապրանքային նշան, ֆիրմային անվանում դաշտերում լրացված է ապրանքի անվանումը, 11-րդ չափաբաժնի համար տեխնիկական բնութագրում և արտադրողի անվանում դաշտում նշված են տարբեր ընկերություններ, ինչպես նաև առկա է «կամ համարժեք» արտահայտությունը:
- «ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ապրանքային նշան, ֆիրմային անվանում և արտադրող դաշտերում լրացված տվյալները չեն համապատասխանում միմյանց, ինչպես նաև տեխնիկական բնութագիր դաշտում առկա է «կամ համարժեք» արտահայտությունը:

- Հիմք ընդունելով ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետը մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Ցիկլոիդ», «Ֆոտոն», «Սավա», «Դը Բեսթ Փարթներ», «ՂԱՀՐԱՄԱՆ» և «ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանաքային օրվա ընթացքում շտկել վերանշյալ արձանագրված թերությունները, ինչպես նաև ներկայացնել հստակեցված ապրանքների նմուշները:
- Նիստը վերսկսել շտկված փաստաթղթերը համակարգի միջոցով ներկայացնելուց հետո մինչև 5-րդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ը (ք. Երևան, Տերյան 105, 3211 սենյակ հասցեում):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ		Կարապետ Թոռչյան
Անդամներ		Աննա Սարգսյան
		Աննա Գասպարյան
Քարտուղար		Ռոզա Մեհրաբյան